

ԱՄՓՈՓԻՉ ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ (08.09.2014-04.12.2014) ԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-ԻՆ, 16-ԻՆ, 17-ԻՆ ԳՈՒՄԱՐՎԱԾ ԱՐՏԱՀԵՐԹ ՆՍՏԱՇՐՋԱՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հինգերորդ գումարման վեցերորդ նստաշրջանի ընթացքում գումարվել է 5 չորսօրյա և 3 արտահերթ նիստ՝ 1-ը ՀՀ կառավարության նախաձեռնությամբ և 2-ը՝ ԱԺ պատգամավորների: Հերթական նստաշրջանի ավարտից հետո գումարվել է մեկ արտահերթ նստաշրջան՝ ՀՀ կառավարության նախաձեռնությամբ և երեք արտահերթ նստաշրջաններ ՀՀ ԱԺ պատգամավորների նախաձեռնությամբ, որից մեկն ընթացել է դռնփակ:

Նստաշրջանի սկզբում հաստատված օրակարգում ընդգրկված էր 145 հարց, որից 93-ը ՀՀ կառավարության նախաձեռնություններ էին, 47-ը՝ ՀՀ ԱԺ պատգամավորների, իսկ 5-ը պարտադիր և ըստ անհրաժեշտության քննարկվող հարցեր էին: Օրակարգի միջազգային պայմանագրերի վավերացման մասին բաժինն ընդգրկում էր 28 միջազգային համաձայնագիր:

Հետագայում նստաշրջանի օրակարգը լրացվեց ևս 55 հարցով, այդ թվում՝ 22 ՀՀ կառավարության նախաձեռնություն, 17 ՀՀ ԱԺ պատգամավորական նախաձեռնություն և 4 պարտադիր և ըստ անհրաժեշտության քննարկվող այլ հարցեր: Օրակարգը լրացվել է նաև 12 միջազգային պայմանագրով:

Նստաշրջանի օրակարգում ընդգրկված 228 հարցերից (ներառյալ միջազգային պայմանագրերը) 179-ը օրենքների նախագծեր կամ նախագծերի փաթեթներ էին, որոնցից աշնանային նստաշրջանի և դրանից հետո գումարված արտահերթ նստաշրջանների ընթացքում քննարկվել և ամբողջությամբ ընդունվել են

46-ը (40-ը ՀՀ կառավարության (9-ը կառավարության որոշմամբ՝ անհետաձգելի), իսկ 6-ը՝ ՀՀ ԱԺ պատգամավորների նախաձեռնած նախագծեր էին): Միջազգային պայմանագրերից զատ քննարկվել է 4 պարտադիր և ըստ անհրաժեշտության քննարկվող հարց: Ընդունվել է մեկ ՀՀ ԱԺ հայտարարություն: Մերժվել է ՀՀ ԱԺ-ի երկու որոշման նախագիծ, ինչպես նաև 3 օրենսդրական նախաձեռնություն՝ 1 ՀՀ ԱԺ պատգամավորների՝ խմբակցությունների կողմից արտահերթ համարված օրենքի նախագիծ և 2 կառավարության ներկայացրած և անհետաձգելի համարված օրենքների նախագծերի փաթեթ, որոնք հետագայում կրկին ներկայացվեցին ԱԺ-ի քննարկմանը, և որոնցից մեկը ամբողջությամբ ընդունվեց ՀՀ կառավարության նախաձեռնությամբ գումարված ՀՀ ԱԺ-ի արտահերթ նստաշրջանի ընթացքում: Ամբողջությամբ ընդունված 46 օրենքներից կամ օրենքի փաթեթներից 12-ը մայր օրենքներ են, որոնցից 10-ը ՀՀ կառավարության նախաձեռնություն է, 2-ը՝ ՀՀ ԱԺ պատգամավորների:

Նստաշրջանի ընթացքում՝

- ՀՀ ԱԺ-ը հաստատեց ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի ձևավորման կարգը՝ 61 կողմ, 16 դեմ, 2 ձեռնպահ ձայներով:
- Քննարկվեց և ընդունվեց «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը
- Քննարկվեց Հանրային հեռուստառադիոընկերության 2013 թվականի գործունեության վերաբերյալ Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի հաղորդումը
- «2013 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության եւ երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին» տարեկան զեկույցը
- Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի 2015 թվականի գործունեության տարեկան ծրագիր, որի քվեարկությունը տեղափոխվեց հաջորդ հերթական նստաշրջան:

Սեպտեմբերի 29-ին և 30-ին ՀՀ ԱԺ պատգամավորների նախաձեռնությամբ արտահերթ նիստեր էին հրավիրվել, որոնք սակայն չկայացան քվորում չապահովվելու պատճառով: Նույն կերպ չկայացած համարվեց 2014 թվականի դեկտեմբերի 15-ին ՀՀ ԱԺ պատգամավորների նախաձեռնությամբ հրավիրված արտահերթ նստաշրջանը:

2014 թվականի դեկտեմբերի 16-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների նախաձեռնությամբ գումարվեց արտահերթ նստաշրջան, որի ընթացքում քննարկվեց և 71 կողմ, 1 դեմ, 0 ձեռնպահ ձայներով ընդունվեց «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հայտարարությունը» (Պ-16.12.2014,16.12.2014, հեղինակներ՝ Արմեն Ռուստամյան, Վահրամ Բաղդասարյան):

2014 թվականի դեկտեմբերի 17-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների նախաձեռնությամբ գումարվեց արտահերթ նստաշրջան, որի ընթացքում դռնփակ նիստերում քննարկվեց «Հայաստանի Հանրապետության Ֆինանսական շուկայում ստեղծված իրավիճակի վերաբերյալ հաղորդումը»:

Նստաշրջանի ընթացքում ԱԺ պատգամավորները ՀՀ կառավարությանը դիմել են 21 գրավոր և 49 բանավոր հարցով: Հնչել է 100 պատգամավորական հայտարարություն, որոնցից 28-ը վերաբերում էր գործադիրի գործունեությանը: Քննարկվել է «Օրինաց երկիր» խմբակցության հարցապնդումը:

Նստաշրջանների ընթացքում վավերացվեց 14 միջազգային պայմանագիր, այդ թվում՝ էլեկտրաէներգիայի, ջրային ոլորտի և այլ ենթակառուցվածքների բարելավմանը, համայնքների մրցունակության խթանմանն ուղղված, վարկային և ֆինանսավորման համաձայնագրեր: Վավերացվեց նաև «2014 թվականի հոկտեմբերի 10-ին Մինսկում ստորագրված «Հայաստանի Հանրապետության՝

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագիրը»: Ընդունվեցին մի շարք օրենսդրական նախաձեռնություններ՝ գործող կարգավորումները նշված համաձայնագրի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով, մասնավորապես՝ «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, «Սննդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը և այլն: